ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

GENERAL SECRETARY

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 599608 , ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am,
www.escs.am

N 04/22/25599-20 23 09 2020թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հ/կ-ի
նախագահ Շուշան Դոյդոյանին
/Հասցե՝ Երևան, Փավստոս Բուզանդի փ., 1/3
sh.doydoyan@icloud.com
Հեռ.՝ 37491407836/

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարություն հասցեագրված Ձեր՝ 15.09.2020թ. թիվ 57609 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

Նախքան ուսումնական գործընթացի մեկնարկը հանրակրթական ուսումնական հաստատություններում դիտարկումներ չեն իրականացվել՝ հաշվի առնելով աշխատանքների մեծ ծավալը և ժամանակի չափազանց սուղ լինելու փաստը: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ, իրականացրել է ուսումնասիրություն՝ ուսումնական գործընթացի վերսկսման հստակ գործողությունների վերաբերյալ, և համապատասխան գերատեսչությունների հետ քննարկման արդյունքում մշակվել է հնարավոր սցենարների նախագիծ՝ պահանջվող ռեսուրսների նկարագրությամբ և ֆինանսական գնահատականով:

Նախքան ուսումնական գործընթացի վերսկսումը թե՛ պետական, թե՛ մասնավոր հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ իրականացվել է ամենօրյա աշխատանք՝ ապահովելով COVID-19-ի պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքի կազմակերպման ուղեցույցով սահմանված կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն: Վերոնշյալ ուղեցույցով սահմանված կանոնների պահպանման համար պատասխանատվություն են կրում դպրոցի բոլոր աշխատակիցները:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած առանձին դիտարկումներ չեն անցկացվել հանրակրթական դպրոցներում, բայց տվյալ հաստատություններում համապատասխան պայմանների դիտարկման գործընթացը ԿԳՄՍ նախարարության ամենօրյա գործառույթներից է, և պարբերաբար այն իրականացվում է տարբեր ծրագրերի շրջանակում (ներառականության ապահովման համատեքստում իրականացվող տարբեր

տեսակի վերանորոգումներ և մասնակի նորոգումներ, սանհանգույցների, մարզադահլիճների, ճաշարանների վերանորոգում, մոդուլային դպրոցների կառուցում և այլն):

Հայտնում ենք նաև, որ դպրոցներում համապատասխան պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը կազմում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի պարտադիր բաղադրիչ և նշված տեղեկատվությունը հասանելի է նաև տվյալների շտեմարանի միջոցով: Նախապատրաստական աշխատանքների շրջանակում դիտարկվել է հասանելի ամբողջ տեղեկատվությունը, կազմակերպվել են քննարկումներ համապատասխան գերատեսչությունների հետ, ուղարկվել և ստացվել են գրավոր առաջարկներ:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, COVID-19-ի պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքի կազմակերպման ուղեցույցով սահմանված կանոնների և ընթացակարգերի պահպանման նպատակով համապատասխան տեսչական մարմիններն անակնկալ այցեր են կատարելու թե՛ պետական, թե՛ մասնավոր դպրոցներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն
Հեռ.՝ 010599612